

Բարև ձեզ: Ջոն Մյուիր միջանկյալ դպրոցի տնօրեն դոկտոր Միլլերն է զանգահարում այս շաբաթվա նորությունների թողարկումով: Սա ուսումնական տարվա վերջին շաբաթն է և խնդրում եմ համոզվել, որ երեխաները դպրոցին վերադարձնեն բոլոր դասագրքերն ու գրադարանի գրքերը: Նրանք պետք է բերեն դասագրքերը դպրոցի Միդիա կենտրոն: 8-րդ դասարանի աշակերտները փոխադրման հանդեսի փորձը կկատարեն երեքշաբթի և չորեքշաբթի օրերին: Չորեքշաբթի օրը, տեղի կունենա նաև ավարտական խնջույքը: Հինգշաբթի օրը, տեղի կունենա 8-րդ դասարանցիների փոխադրման հանդեսը և նրանք պետք է դպրոցի ստորին դաշտավայրում գտնվեն միջև առավոտյան ժամը 8-ը: Հյուրերի համար դպրոցի դարպասը կբացվի առավոտյան ժամը 8:15-ին, իսկ հանդեսը կսկսվի առավոտյան ժամը 9-ին: Հինգշաբթի օրն, ուսումնական տարվա վերջին օրն է նաև 6-րդ և 7-րդ դասարանցիների համար: Այդ օրը կարճ օր է և դասերը կավարտվեն կեսօրից հետո ժամը 12:33-ին:

Շնորհակալություն և հաջողություն եմ ցանկանում: